ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հունվարի 2021 թվականի №___-Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի №194Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2022 թվականի հունվարի 25-ի №ԳՍ/22.4/1717-2022 և «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության նույն ամսաթվի №ԱԳ/37-2022 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 20-ի «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկում էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №194Ա որոշման 2-րդ կետով հաստատված Էլեկտրական էներգիայի (հզորության) և ջերմային էներգիայի համակցված արտադրության №0350 լիցենզիայի պայմանների՝

1) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է՝

1) սույն լիցենզիայով սահմանված ժամկետում (ժամանակահատվածում) 233,6 ՄՎտ տեղակայված (դրվածքային) էլեկտրական հզորությամբ (անվանական հզորությունը 250,6 ՄՎտ ԱյԷսՕ (ISO) պայմաններում) և 434,9 ԳՋ/ժ ջերմային էներգիայի առաքմամբ համակցված շոգեգազային ցիկլով աշխատող կայանում (այսուհետ՝ Կայան) արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) և ջերմային էներգիա՝ սույն լիցենզիայի պայմանների №1 հավելվածով ամրագրված ագրեգատներով (սարքավորումներով),
2) Շուկայի կանոնների համաձայն մեծածախ շուկայում վաճառել կամ արտահանել իր արտադրած էլեկտրական էներգիան (հզորությունը), էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում գնել էլեկտրական էներգիա (հզորություն), եթե սեփական արտադրության էլեկտրական էներգիայով չի կարողանում կատարել իր պայմանագրային պարտականությունները,
3) Շուկայի կանոնների համաձայն՝ մատուցել էլեկտրական էներգիայի հաշվեկշռման ծառայություն, որի շրջանակում մեծածախ շուկայում գնել, վաճառել, ներկրել և արտահանել էլեկտրական էներգիա:»,

2) 7-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի փետրվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- հունվարի 2022թ.